ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

21 հունվարի 2016 թվականի N 07-Հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N1555-Ն որոշման հանձնարարականների կատարումն ապահովելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N1555-Ն որոշման հանձնարարականների կատարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի 1-ին կետով հաստատված ժամանակացույցում նշված վերահսկողներին և պատասխանատու կատարողներին՝ ապահովել ժամանակացույցում նշված հանձնարարականների կատարումը, նախապատրաստվող նյութերի սահմանված կարգով ներկայացումը:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը թողնում եմ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ Ի. Իսայանին:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ